



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2023 թվականի N 1199-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ
ՏԱՇԻՐ ԶԱՀՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի
N 743-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 1187-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արկադի Աշոտի Կարապետյանի կողմից լիազորված անձ՝ Անահիտ Սաղաթելի Կարապետյանի (անձնագիր՝ տրված՝ 21.05.2020-ին) դիմումը (մուտք՝ 14/07/2023-ի ՔԴ-730-23), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2460762 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023RZJ7JB ծածկագիրը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 9-րդ, 17-րդ և 18-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 2-ի N88-Ն որոշումով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով նկատի ունենալով որ 2012 թվականի կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Զահուկյան փողոց, թիվ 30 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0103-0048) Արկադի Աշոտի Կարապետյանի կողմից սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,05355 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 62 քմ ընդհանուր

մակերեսով ավտոտեխսպասարկման կետը՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Պարտավորեցնել ինքնական կառույցն իրականացնող Արկադի Աշոտի Կարապետյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900275081124) ինքնական կառույցի օրինականացման համար սահմանված վճարը (1քմ հասարակական նշանակության շինության համար 2056 ՀՀ դրամ)՝ ընդհանուր շինության համար 127480 (հարյուր քսանյոթ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Փոփոխված համարել 0,05355 հա մակերեսով արտադրական պահեստի կառուցման հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության՝ համապատասխանեցնելով Տաշիր համայնքի 2007 թվականին հաստատված գլխավոր հատակագծին:

6. Արտադրական նշանակության պահեստի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական նշանակության ավտոտեխսպասարկման կետի:

7. Շինության գործառնական նշանակության փոփոխությունները կատարել առանց շինարարական թույլտվության տրամադրման:

8. Ուժը կորցրած ճանաչել Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր Զահուկյան փողոց թիվ 30 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնական կառուցված շինության օրինականացման մասին» N 793-Ա որոշումը:

9. Ուժը կորցրած ճանաչել Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի համայնք տաշիր, քաղաք Տաշիր Զահուկյան փողոց թիվ 30 հասցեի, 06-008-0103-0048 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները հաստատելու մասին» N 1187-Ա որոշումը:

10. Սույն որոշումից ծագող իրավունքները ներառել համայնքի հատակագծական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2023 թվականի N 1200-Ա

**«ՄԵԳԱՍ ԳՐՈՒՂ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/134» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. նոյեմբերի 7-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Մեգաս Գրուղ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների տուժանքի մասին համաձայնագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Մեգաս Գրուղ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման N ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/134-1 ծածկագրով պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2023 թվականի N 1201-Ա

**«ԵՌԱՆԿՅՈՒՆ ՊՐՈՋԵՔՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-23/131» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. հոկտեմբերի 27-ի N 3 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ բանկային երաշխիքի ձևով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Եռանկյուն Պրոջեքտ» ՍՊԸ-ն հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կ ազման ծառայությունների մատուցման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-23/131-3» ծածկագրով պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 23

ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1202-Ա

**ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՆՎԵԼԻ ՂԱՐԻՔՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Մերուժան Մանվելի Ղարիբյանի դիմումը (մուտք՝ 24.11.2023-ի. ՄՀ 159-23)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերուժան Մանվելի Ղարիբյանին տալ կթի սրահի և պարիսպի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Մերուժան Մանվելի Ղարիբյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 24

ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1203-Ա

**ԱԼԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ԿՈԼԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ
ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ
ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Ալիկ Ղազարյանը, Էդգար Ղազարյանը, Կոլիկ Ղազարյանը և Քրիստինե Ղազարյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 02-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-074-0282-0082, 06-074-0282-0183, 06-074-0254-0119, 06-074-0228-0009 և 06-074-0120-0013 կադաստրային ծածկագրերով, 2.65 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Ալիկ Ղազարյանի, Էդգար Ղազարյանի, Կոլիկ Ղազարյանի և Քրիստինե Ղազարյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 296.237 (երկու հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ,որից 197.959 (հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր հիսունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 98.278(իննսունութ հազար երկու հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 32.721 (երեսուներկու հազար յոթ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, որից 27.231(քսանյոթ հազար երկու հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.490(հինգ հազար չորս հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ

2023 թվականի նոյեմբերի 02-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 24-ին հրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Ալիկ Ղազարյանը,Էդգար Ղազարյանը, Կոլիկ Ղազարյանը և Քրիստինե Ղազարյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 10.11.2023) :

(Վարչական վարույթի լուծման իրականացվել են պատշաճ ծանուցված Ալիկ Ղազարյանի, Էդգար Ղազարյանի, Կոլիկ Ղազարյանի և Քրիստինե Ղազարյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատմասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողատմասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Այլիկ Ղազարյանից, Էդգար Ղազարյանից, Կոլիկ Ղազարյանից և Քրիստինե Ղազարյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 328.958 (երեք հարյուր քսանութ հազար ինը հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

296.237 (երկու հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես 06-074-0282-0082, 06-074-0282-0183, 06-074-0254-0119, 06-074-0228-0009 և 06-074-0120-0013 կադասրային ծածկագրերով, 2.65 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 197.959 (հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր հիսունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 98.278 (իննսունութ հազար երկու հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

32.721 (երեսուներկու հազար յոթ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ, որից 27.231 (քսանյոթ հազար երկու հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.490 (հինգ հազար չորս հարյուր ինսուն) : Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 02.11.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275082030 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002005 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 24
ք. Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1204-Ա

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ, ՄԱՐՏԻԿ ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ, ՌՈԶԱ
ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԻՆԱ ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Արմենուհի Յավրումյանը, Մարտիկ Յավրումյանը, Ռոզա Յավրումյանը եվ Ալինա Յավրումյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 02-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-074-0223-0099, 06-074-0002-0001, 06-074-0017-0024, 06-074-0254-0128, 06-074-0002-0025, 06-074-0213-0008 և 06-074-0223-0099 կադաստրային ծածկագրերով, 3.51 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Արմենուհի Յավրումյանի, Մարտիկ Յավրումյանի, Ռոզա Յավրումյանի եվ Ալինա Յավրումյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 312.880 (երեք հարյուր տասներկու հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 210.327 (երկու հարյուր տասը հազար երեք հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 102.553 (հարյուր երկու հազար հինգ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 38.775 (երեսունութ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որից 32.275 (երեքսունեկու հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 6.500 (վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

2023 թվականի նոյեմբերի 02-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 24-ին հրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Արմենուհի Յավրումյանը, Մարտիկ Յավրումյանը, Ռոզա Յավրումյանը եվ Ալինա Յավրումյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 10.11.2023) :

(Վարչական վարույթի լուծման իրականացվել են պատշաճ ծանուցված Արմենուհի Յավրումյանի, Մարտիկ Յավրումյանի, Ռոզա Յավրումյանի եվ Ալինա Յավրումյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատմասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողատմասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Կարապետ Արմենուհի Յավրույանից, Մարտիկ Յավրույանից, Ռոզա Յավրույանից եվ Ալինա Յավրույանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 351.655 (երեք հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

312.880 (երեք հարյուր տասներկու հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես 06-074-0223-0099, 06-074-0002-0001, 06-074-0017-0024, 06-074-0254-0128, 06-074-0002-0025, 06-074-0213-0008 և 06-074-0223-0099 կադասրային ծածկագրերով, 3.51 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 210.327 (երկու հարյուր տասը հազար երեք հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 102.553 (հարյուր երկու հազար հինգ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,38.775 (երեսունութ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ, որից 32.275 (երեքեսուներկու հազար երկու հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 6.500(վեց հազար հինգ հարյուր) : Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 02.11.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: 6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275082030 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002005 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 24
ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1205-Ա

**ՄԱՐԻՆԵ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՆՎԵՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ
ԷՄՄԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ
ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Կարապետ Մարինե Աբրահամյանը, Նվեր Վարդանյանը, Աննա Վարդանյանը և Էմմա Վարդանյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 03-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-074-0281-0048, 06-074-0120-0011, 06-074-0291-0030, 06-074-0120-0011, 06-074-0265-0269 և 06-074-0228-0008 կադաստրային ծածկագրերով, 2.2 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Մարինե Աբրահամյանի, Նվեր Վարդանյանի, Աննա Վարդանյանի և Էմմա Վարդանյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 262.858 (երկու հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ,որից 176.345 (հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 86.513 (ութսունվեց հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 36.402 (երեսունվեց հազար չորս հարյուր երկու) ՀՀ դրամ, որից 24.198 (քսանչորս հազար հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 4.879 (չորս հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ որպես տույժ

2023 թվականի նոյեմբերի 03-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 24-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Մարինե Աբրահամյանը, Նվեր Վարդանյանը, Աննա Վարդանյանը և Էմմա Վարդանյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 15.11.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Մարինե Աբրահամյանի, Նվեր Վարդանյանի, Աննա Վարդանյանի և Էմմա Վարդանյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների՝ գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ԿՄարինե Աբրահամյանից, Նվեր Վարդանյանից, Աննա Վարդանյանից և Էմմա Վարդանյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 299.260 (երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար:

262.858 (երկու հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ որպես 06-074-0281-0048, 06-074-0120-0011, 06-074-0291-0030, 06-074-0120-0011 06-074-0265-0269 և 06-074-0228-0008 կադասրային ծածկագրերով, 2.2 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 176.345 (հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես անպռք, 86.513 (ութսունվեց հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ 36.402 (երեսունվեց հազար չորս հարյուր երկու) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ, որից 24.198 (քսանչորս հազար հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 4.879 (չորս հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 03.11.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:


2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: 6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275082030 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002005 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

 Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 24

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1206-Ա

**ԼԵՈՆԻԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԷԼԼԱԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ
ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Լեոնիդ Հարությունյանը և Էլլադա Հարությունյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հոկտեմբերի 31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-064-0106-0004, 06-064-0017-0006 և 06-064-0117-0012 կադաստրային ծածկագրերով, 8.37 հա ընդհանուր մակերեսով՝ հողամասերը հանդիսանում են Լեոնիդ Հարությունյանի և Էլլադա Հարությունյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ:

Նշված հողատմասերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 1.007.038 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ,որից 675.984 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 331.054(երեք հարյուր երեսունմեկ հազար հիսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 121.508 (հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամ, որից 100.840 (հարյուր հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 20.668 (քսան հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ՝ որպես տույժ

2023 թվականի հոկտեմբերի 31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի նոյեմբերի 24-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Լեոնիդ Հարությունյանը և Էլլադա Հարությունյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 10.11.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Լեոնիդ Հարությունյանի և Էլլադա Հարությունյանին բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատմասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողատմասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Լեռնիդ Հարությունյանից և Էլլադա Հարությունյանից հոգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 1.128.546 (մեկ միլիոն հարյուր քսանութ հազար հինգ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

1.007.038 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ՝ որպես 06-064-0106-0004, 06-064-0017-0006 և 06-064-0117-0012 կադասրային ծածկագրերով, 8.37 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 675.984 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 331.054(երեք հարյուր երեսունմեկ հազար հիսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

121.508 (հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ, որից 100.840 (հարյուր հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 20.668 (քսան հազար վեց հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 31.10.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից: 6. Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275092022 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002104 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. նոյեմբերի 24

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1207-Ա

**ԱՆԺԵԼԱ ՊԱՐՏԵՆԻ ՄԽՈՅԱՆԻՆ ԾԱԾԿԱՐԱՆԻ ՄԱՌԱՆԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Անժելա Պարտենի Մխոյանի դիմումը՝ (մուտք՝ 24.11.2023-ի. ՔԴ-1341-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անժելա Պարտենի Մխոյանին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր Գագարինի փողոց 11 հասցեում գտնվող ծածկարանի, մառանի և պարիսպի շահագործման թույլտվություն:
2. Անժելա Պարտենի Մխոյանին՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին, մուծել 5000 (հինգ հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ



2023թ. նոյեմբերի 24

ք.Տաշիր



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 1208-Ա

**ԷԼԵՈՆՈՐԱ ԿԱՐԱՄԱՆՈՎԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱՄԱՆՈՎԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

